

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ձր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՐԱՆ

Ներքին քիմիկ ծառայություն
Տարեկան . . 14 Ձր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոլար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Փ Ի Ր

Ա Ջ Փ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՏԻ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւս

չեն տրուիր

ՄԵՐ ԶԱՆԱԿՆԵՐՈՒ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Պուկարահայոց մէջ ընդհանրապէս սխալ հակում մը կայ տղայոց դաստիարակութեան մասին. ծնողներէ շատերը կը կարծեն թէ իրենց զաւկին ապագան ապահովուած կըլլայ՝ եթէ զանի Պուկարական ժիմնազի մը մէջ դաստիարակեն, առանց այդ խեղճ պատանին իր մայրենի լեզուին ընտելացնելու: Անոնք տակաւին այն համոզումը ունին թէ՝ Պուկար վարժարանէ մը շրջանաւարտ հայ երիտասարդը վերջապէս կապաւորական պաշտօնի մը զուլայր կանցնի ու անով իր ապրուստը կապահովէ:

Այս համոզման սխալ լինելը մենք քանի քանի անգամներ բացատրած էինք և այս անգամ ալ երկու բառով կը կրկնենք թէ՝ պուկարիոյ մէջ ոչ-պուկար երիտասարդներ, եթէ դառն յուսախաբութեան մատնուի չեն ուզեր, երբեք ակնկալելու չեն կառավարական պաշտօնէն: Երբեք չեն կրնար զոգուած պէտք է համարել մեզ համար, քանի որ հոն պէտքէն եռապատիկ աւելի պուկար թեկնածուներ լեցուած են, որոնց շատը չ'որ հացի մը համար պաշտօնի մը տիրանալ կուզէ, միշտ իր բռունցքը ցոյց տալով տարբեր ազգի պատկանող թեկնածուներու դէմ:

Մեր կարծիքով, հայ ծնողները ջանալու են իրենց զաւակները անկախ և հայ ազգին ցեղային յատկանքներուն յարմարող ասպարէզներու համար պատրաստել, ինչպէս որ կընեն Հրեաները: Ասոնք թէ Պուկարիոյ և թէ Ռուսական մէջ իրենց զաւակները առեւտրական կամ վաճառականական ասպարէզի համար կը պատրաստեն, որովհետեւ իրենց ցեղային յատկութիւնը զխաւորապէս այդ ասպարէզին մէջ կը փայլի, և անով հրապարակին վրայ հետզհետէ տիրող միակ տարրը կը հանդիսանան. մինչդեռ անդին կառավարական պաշտօնի պատրաստուող պուկար

և ուսմէն երիտասարդներ որ մը կուշտ և երեք որ անօթի իրենց օրերը անցնել դատապարտուած են: Նոյնպէս շատ երկիրներու մէջ բուն տիրապետող ազգը այդ պատճառաւ նոյն փճակին մատնուած է:

Այս տողերով մենք Հրեաներուն դէմ կողմերն ալ ընդօրինակենք ըսել չենք ուզեր. մեր նպատակն է՝ ինչ որ արտասահմանի հայ գաղթականութեանց շահը կը պահանջէ՝ յանձնարարել հայ ծնողներու ու պաշտպաններու որ իրենց փոքրիկները պատրաստել ջանան զխաւորապէս առեւտրի և արհեստներու համար. որովհետեւ Մարի Երկրէն դուրս, մեզ համար անբռնաբարելի ասպարէզները ատենք են և հայ տարրը այս երկու ասպարէզներուն մէջ լաւ և պատուաբեր յատկութիւններ ցոյց տուած է դարերէ ի վեր շատ մը մրցակից ազգեր գերազանցելով: Ազգային այս բնատուր յատկութիւնները լաւ ըմբռնող շատ հայեր այսօր եւրոպական կարեւոր կեդրոններու մէջ առեւտրական մեծ դիրքեր գրաւած են. զըզրոցական հայ պատանիներ ու երիտասարդներ գեղարուեստի, բնագիտական, չափագիտական, մեքենագիտական և բժշկական բարձրագոյն հաստատութեանց մէջ իրենց ցոյց տուած ընդունակութեամբ բուն եւրոպացի ուսանողները կը գերազանցեն, էն փայլուն մրցանակներուն արժանանալով, օտար մամուլէն ծափեր խլելով, և անոնք գրեթէ առանց բացառութեան, իրենց նախնական դաստիարակութիւնը հայ վարժարաններու մէջ ստացած են: Մինչդեռ ասոնք ազգային դաստիարակութենէ զուրկ շատ մը հայ երիտասարդներ՝ միայն պուկար ժիմնազէ մը շրջանաւարտ տարիներով գունազեղ երազանքներու մէջ տարուբերուելէ վերջ, կը հարկադրուին կրկին հայ վաճառատուն մը դիմել, ուր յաւիտենապէս երկրորդական գրագիր մը ըլլալ դատապարտուած են, միայն Պուկարիէն թղթակցութեանց համար՝ որովհետեւ, ժիմնազին մէջ ուրիշ լեզու չեն կրցած սորվիլ և

ոչ ալ առաջնակարգ գրագրէ մը պահանջելի բազմակողմանի հըմտութեանց տարբերք ուսումնասիրել: Սակայն ասոնք եթէ հայ վարժարանի մը ընթացքին հետեւէին կանոնաւորապէս, հոն վաճառատան մը պէտքին չափ պուկարէնէն սորվելէ դատ, հիմնապէս իրենց մայրենի լեզուն ուսանելով՝ եւրոպական լեզուի մըն ալ կընտելանային, ըստ կարելոյն ուրիշ կարեւոր առարկաներէ զուրկ չմնալով:

Ամփոփելով խօսքս կըսեմ. մեր ուժերը մեր վարժարաններուն մէջ կեդրոնացնենք և զաւակնին հոն դաստիարակենք, մեր ազգային յատկութեանց համեմատ զանոնք առեւտրի և արհեստի պատրաստելով:

ԳՈՒՐԴԵՔ

ՕՐՈՒՆԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Վերջին շաբթու մէջ, Յունաստանի նախարարապետը՝ Մ. Չալիմիս հարկադրուեցաւ տարիէ մը ի վեր իր նախագահած դահլիճին հրաժարականը յետոք թաքաւորին ներկայացնել, երեսփոխանական նոր ընտրութեանց արգիւնքին վրայ:

Նախորդ տարու Տոկոսմարի ամսուն էր որ Մ. Չալիմիս իշխանութեան կը բարձրանար, յաջորդելով Մ. Թէոտոքիսի, որուն դահլիճը հրաժարիլ ստիպուեցաւ Աստուածաշունչի դասական թէ գործածական բարբառով յունարէնի թարգմանուելու խընդրոյն առթիւ պատճառուած համալսարանական շփոթութեանց հետեւանքով, որ ատեն նոյն իսկ պահ մը արքայական գահը լըրջօրէն վտանգի կենթարկուէր:

Յունաստանի սահմանադրական արդի կազմակերպութիւնը հիմնուած է տեղացի բնակչութեան ազատ քուէներով ընտրուած 234 հոգիով ներկայացուցիչներու միակ ժողովոյ մը վրայ, որուն անգամ

ները յաջորդաբար չորս տարի թագաւորութեան օրէնսդրական ու կառավարչական գերագոյն ղեկը վարելու առանձնաշնորհը կը փայլեն: Այնպէս որ, նախարարութիւն մը որպէս զի կանգուն մնայ, այս ժողովոյ մէջ կողմնակիցներու ստուար, բացարձակ մեծամասնութեան մը աջակցութիւնը ապահովուէ: արդ, նոր ընտրութիւնները՝ իշխանութեան վրայ եղող Չալիմիսի նախարարութեան բացորոշապէս անպատարաւորութիւնը մը յանգած ըլլալով, այս վերջինն անմիջապէս հրաժարիլ կը մնար:

Յունական նախորդ Երեսփոխանական Ժողովոյ մէջ, ընդդիմադիր կուսակցութիւնը կը բաժնէին սկզբունքով ու ծրագրով իրարմէ բոլորովին որոշուող երկու տարբեր խմբակներ, մէկ կողմէ Թէոտոքիսի խմբակը, աւելի անդորր, շրջահայեաց ու ազատասէր քաղաքականութեան հակող խմբակ մը, ու միւս կողմէ աւելի ազգայնամոլ, զինուորական, վարչական անմիջական բարեկարգութեանց շատագով Տէլիանիսի խմբակը: Նոր ընտրութեանց մէջ, իշխանութեան այս երեք թեկնածուներուն, երեք մրցակիցներուն մէջէն՝ Տէլիանիսն է, իր 76րդ տարիքը թեւակոխած քաղաքագէտ մը, որ իր երկու հակառակորդներուն—Չալիմիսի ու Թէոտոքիսի—դէմ ջանքերով առաւելութեամբ մը յաղթական կը հանդիսանայ: Նորակազմ Երեսփոխ. Ժողովոյ 234 անդամներէն 115ը իր արբանեակներուն շարքերէն ընտրուած են, մինչ Թէոտոքիս ու Չալիմիս միասին 119 կողմնակից կուսեան: . . այսինքն՝ Տէլիանիսի չորս ձայն կը պակսի, որպէս զի նորակազմ Ժողովոյ մէջ բացարձակ առաւելութիւն մը ունենայ:

Այս պայմաններու մէջ՝ նոր նախարարութեան գլուխը Տէլիանիսի անցնելը տարակոյս չէր վերցնել, թէեւ կարծողներ կային թէ յետոք թաքաւորը գուցէ քիչ մը դժկամակէր իրեն նախարար ընել Տէլիանիսի պէս վարկեցնական ծայրայեղ գրգռութեամբ ենթակայ քաղաքագէտ մը—որը 1896ին պատճառ եղած էր Թուրքիոյ հետ

ձախող պատերազմ մը յառաջ բերելով, Յունաստանի առեւտրական վարկն ու Արքունիքին գոյութիւնը ծանրապէս վտանգելու. որը այժմ ալ իր քաղաքական ծրագրին մէջ առաջնակարգ կարեւորութիւն մը կընծայէ 1897ի պատերազմին սկզբնապատճառ՝ նոյն տղ կրէտէի վրայ, ինչպէս Մակեդոնիոյ մէջ, Յունաստանի ունեւնալ յաւակնած ցեղային շահերը պաշտպանելուն, մինչ թուրքիոյ հետ նպաստաւոր յարաբերութեանց մշակումը Զայիմիսի տարիէ մը ի վեր հետեւած քաղաքականութեանը հիմը կը կազմէր:

Գիտախտապէս, Երեսփոխ. նոր ընտրութեանց արգիւնքը բաւականէն աւելի բացօթի է. այս պատճառաւ ահա, կամայականաւ, թաղաւորը նոր նախարարութիւնը կազմելու պաշտօնը յանձնել հարկաւորեցաւ Մ. Տէլիանիսի, որը այդ հրաւերին անսալով, կազմեց իր դահլիճը, իրեն ներքին գործերու նախարար ընտրելով Մ. Մալիոմիսիսին: Ու արտաքին գործերու նախարար Մ. Սթրուշիսը՝ որոնք նոյնպէս 1897ին Տէլիանիսի դահլիճին մէջ նոյն պաշտօնները կը վարէին:

Կը մնայ ուրեմն տեսնել թէ՛ նորակազմ խորհրդարանէն այս նախարարութիւնը, ինչ ընդունելու թիւն պիտի գտնէ ու որո՞ք պիտի ըլլան գործնականին մէջ իր հետամտած վարչական ու գանձային բարեկարգութիւնները, զոր ընդգիծողներն շարքին մէջ՝ Տէլիանիս այնքան մեծագու զը հնչեցնէր:

Տ. Է.

ՊԱՌԱՆ ԳՈՎԱՍԱՆՔ
ՁՐԻ ԲԱՄԲԱՍԱՆՔ.

Իրաւունքի մէջ Շուշուի Պարոն Գաղթականին (Նոյեմբեր 9) նամակին ընթերցումը բարոյական պարտականութիւն մը կը գէշ վրաս երկու խօսք ընելու:

Պ. Կոռնակի նամակը, Արեւելի մէջ թէեւ չեմ կարդացած՝ սակայն, եթէ Պ. Գաղթականի հասկացողութեամբ, այդ նամակին մէջ որոշ կերպիւ ըսուած է թէ՛ Շուշուի հայ ազգիկները արդէն սկսած են յաճախել Տ. Սէօյիսի տեանի անօլէնութեան տակ բացուած գորգագործութեան վարժարանը, դա արդարեւ պիտի զօրացնէ զոր հանրութեան կրթականը համար փութացած պէտք է ըլլայ Արեւելի Պ. Նամակագիրը՝ միայն եւ միայն Տ. Սէօյիսի տեանին ի նպաստ նպատակաւոր շաղկապութիւն մ'ընելու ոգով: Իսկ եթէ, Պ. Կոռնակ, հակառակ Պ. Գաղթականին հասկացողութեան, Շուշուի մէջ հայ վարպետի մը տնօրէնութեան տակ բացուած այդ պոլկար արհեստանոցին գոյութիւնը ծանուցանելով՝ միանգամայն կը յայտնէ իր ուրախութիւնը թէ օր մը պիտի կարենան անշուշտ օգտուել անկէց նոյն քաղաքին մեր հայ օրիորդներն ալ, իբրեւ երկրին հարազատ զաւակունքը, առանց խտրութեան ցեղի եւ կրօնի, օրէնքին պատգամած պարաքի եւ իրաւունքի հաւասարութեան ուժով, այն ատեն խնդրը բոլորովին կը փոխուի. զի այդ պարագային չէ թէ միայն Արեւելի Պ. Կոռնակը, ո՛չ թէ միայն Շուշուի հայ ծնողները, այլ եւ ամեն հայ անհատ կրնայ լաւատես լինել այդպիսի հաւանականութեան մը առջեւ ու պէտք է մինչեւ իսկ ուրախ լինել զեռ արգիւնքին չնայած:

Ուրեմն Պ. Կոռնակ ինչո՞վ մեղադրելի է: Գաղթականին նամակին մէջ ուրիշ պարբերութեան՝ ուր կըսէ. «Հայերս օտարին արտասանած փաղաքական խօսքերու ազդեցութեանը տակ ամեն ինչ կը մոռնանք եւ ամեն նախնի գնով կը թողունք որ մեր

մտքի եւ ձեռքի ճարտարութեան արգիւնքն ուրիշներ վայելն» եւ այլն. Պ. Գաղթականը իր այս ընդհանուր տեսութեամբ, որ բաւական ճիշդ է, (ըսել կուզէ թէ Տ. Սէօյիսի տեան եւս իր կարգին օտարին փաղաքական խօսքերու ազդեցութեան տակ ամեն ինչ մոռցած, ամենառիշտ գնով մը ինքզինքը վարձու տուած է, որոշ ժամանակամիջոցի մը համար անշուշտ), ուրեմն ինքը՝ Պ. Գաղթական իսկ կը խոստովանի թէ Շուշուի մէջ մասնաւորապէս 400 ֆրանք ամսաթոշակ ստացող Տ. Սէօյիսի տեանը դեռեւս կրկնապատիկ արժէք ունի իբր լաւ արհեստաւոր. մը մինչ ինքնաբերաբար այդ խոստովանութիւնը կընէ, կը հարցունեմ իրեն թէ ինչ բանաւոր պատճառ ունի արտածելու երբ մէկը ուզէ լսել այսպէս. «Տ. Սէօյիսի տեան իր ազգին պատիւ բերող արհեստաւոր մըն է»: Եւ նոյնպէս մեր յոռի յատկութիւններէն մէկն ալ այն է, որ մենք զօրաբար կը զանազանեմք գնահատել ինչ քննադատելիքն ըսած է տեղ մը իր նամակին մէջ Պ. Գաղթական շատ իրաւացի կերպիւ. անշուշտ պիտի ներէ հարցմանս թէ, Տ. Սէօյիսի տեանին որակը ճշդիւ զանազանելու համար գնահատելի՞ պէտք է նկատել զայն թէ քննադատելի: (Նորոգ գնահատելի մէկ կողմն ալ հմուտ գորգագործ մը ըլլալն է զոր Պ. Նամակագիրը ինքն ալ չկրնար ուրանալ. իսկ ո՞րն է արդեօք քննադատելի կողմը Տ. Սէօյիսի տեանին՝ որուն անունին քով «պատիւ կը բերէ» խօսքին գործածութիւնը շատ անհիմն թուած է կը թուի իրեն. մի՞ գոցէ այն գերազանց պատճառաւ որ աննպաստ պարագայներու ներքեւ մեր գնահատելի արհեստաւոր ստիպուել է օտարին հետ ձախող կերպիւ պայմանաւորուի: Սակայն՝ ասկէ հետեւ ցնել թէ Տ. Սէօյիսի տեան մեր հասարակական զարգացման եւ յառաջդիմութեան օգուտ չբերող մըն է. կամ թէ մեր մէջ արդէն գոյութիւն ունեցող օտարին ծառայելու հակումը ընդամենը արդէն մըն է, եւ այլն. ըստ իս այս խղճմտութիւն չէ այլ ծակ տրամաբանութիւն:

Ես ստիճան ունեցած եմ բաւական մօտէն ճանչնալու Տ. Քերովի Սէօյիսի տեանը:

Ես նա շատ պարկեշտ հայ մը եւ իր պատկանած համայնքին օգտակար լինելու անկեղծօրէն փափագող արհեստաւոր մըն է. անոր կնքած պայմանագրութեան պայմանաւորումը մօտ է լրանալու: Դրամին երկրպագու եւ շահագրգիռ մեր ջօջ-աղա դասակարգը թո՛ղ բանայ իր աչքն ու ականջը. թո՛ղ կազմէ ընկերութիւն մը՝ արդիւնաւորելու համար մեր հայ արհեստաւորին աշխատանքը: Իրեւելեան գորգերու արժէքը տարուէ տարի սկսած է եւրոպական եւ ամերիկեան հրապարակներու վրայ գահացողիչ համեմատութիւններ առնել: Թո՛ղ շահին ընկերութեան բաժնետէրերը, թո՛ղ օգտուին մեր հայ ազգիկները, թո՛ղ ուրիշներ չվայելն մեր մտքի եւ ձեռքի ճարտարութեան արդիւնքը, եւ թո՛ղ չընդհանրանայ մեր մէջ արդէն գոյութիւն ունեցող օտարին ծառայելու հակումը:

Բայց ո՞րու կըսես, ո՞րու կը կարգաս:

Համաձայն չինք բնաւ որպէս զի հրապարակաւ արժեւորելու չարժեւորեալ աշխատանքներ շտապելին. բայց անհաւաք քննադատի մը պարտքն է միաժամանակ բողոքել ձրի բամբասանքներու դէմ:

ՆԱԻԿ-ՆԱԻԿ

Սօֆիա, 24 Նոյեմբեր

ՅԱՅՅԱՆԸ ՈՐՈՒՆ Է

Է.

Գաղտնիքն երեւոյն կնքէ

(Շուր. 86րդ թիւին)

Պ. Փափագեան դադարեցաւ զիս դատապարտուել, աչքի առաջ ունեւնալով պիտի ընթացքը դէպի ինձ: Պ. Փափագեան իր այս պատմութիւնն իրր գաղտնիք մը միայն իմ քովս մնալու փոփաք չը յայտնեց:

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

(36)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԼՈՒՍԻԱ ԵՒ ՎԱՆԱԿԱՆ

- Ինչպէ՞ս հաւատամ... որդիս ո՞վ գիտէ ի՞նչ եղած է, առարկեց պառաւ կինը:
- Մտիկ ըրէ՛. քու ամուսինդ թունաւորուած էր ժամանակաւ:
- Այո՛:
- Կուսակալին՝ ձեռքով:
- Զի՛չդ է:
- Որդիդ իր վրէժը լուծելու համար սպաննած է կուսակալին որդին:
- Ա՛խ ատիկա յայտնի չէ... այդպէս կրսն:
- Հիմա՞կ հաւատացի՞ր որ քու զաւակդ կը ճանչնամ:
- Ի՞նչ ըսեմ... ո՛հ ի՞նչ ըսեմ... կարելի է մեր անցեալ պատմութիւնը լսած ես ու այնպէս կրսն:
- Չէ՛... եթէ ձեր անցեալ պատմութիւնը լսած եմ ու կը յայտնեմ, մամի՛կս, գիտցի՛ր որ զաւակիդ բերնէն իմացած եմ ու այսօր իր ամբողջ ճըշ-

- դութեամբ կը նկարագրեմ: Բայց հաւատացնելու համար թէ ես իմ թախառացած կ'անքիս մէջ հանգիւյսած եմ զաւակիդ, ունիմ ուրիշ անպարտքներ:
- Ի՞նչ անպարտքներ...
- Որդիդ ալ երեսին վրայ մազի երկայն փնջիկ մը կա՞յ:
- Այո՛, կայ:
- Նոյնպէս ծախ աչքին տակը, կոպերուն մօտ արիւնի գուրս ցայտած նշան մը կա՞յ:
- Այո՛, այո՛... ո՛հ, ան է... իմ զաւակս է... կը պաղատի՞մ... ո՞ր է... ո՞ր է կը գտնուի ինքը... ի՞նչ... իր դէմքը կը ծածկէ ինչ... բացազանչեց պառաւ կինը յուզուած ու սրտաբեկ՝ ձայնով մը:
- Մի՛ յուզուիր, մամի՛կս, Աստուած ողորմած է: Որդիդ կը գտնուի եւ անպատճառ:
- Կը գտնուի:
- Այո՛:
- Ըսել է թէ անոր ուր ըլլալը գիտես, անանկ չէ՞:
- Ես մտերացկան մըն եմ: Իմ ձեռքէս չազատիր փնտռած մարդս:
- Մտերացկան... ո՛հ, ամենեւին... դուն մտերացկան մըն չես, դուն աղքատութեան ստպարակը չես: Ես ալ հրեշտակ մըն եմ որ տունս եկար ու քանակէնիդ տարուան իմ կորուսած զաւակիս աւետարտութիւնը ինձի:
- Կեցի՛ր, մամի՛կս, երբ ես խոստանամ քու զաւակդ գտնելու, դուն ալ կը խոստանաս ինձի այս տունին մէջ որբուհի մը պահելու:
- Որբուհի՞ մը:

- Այո՛:
- Որո՞ւ աղջիկն է:
- Որու աղջիկն ըլլալը պէտք չէ քեզի. միայն թէ պիտի խնամես զինքը: Կը խոստանաս:
- Կը խոստանամ... Բայց ատ բանին համար եկար:
- Ո՛հ, ճշմարիտ է... գիտէի որ դուն բարի ես ու չես մերժեր մամիկս:
- Ներքէս Արծրունին, որ ամենէն յարմար տունը նկատած էր այդ հեռաւոր շէնքը, խորապէս ուրախ եղաւ զայն իր ձեռքին մէջ ունենալուն համար: Ուստի ոտքի ելաւ ու մամիկին «մնաս բարով» ըսելէն ետքը, մեկնեցաւ:

ՎԱՆԱՀԱՅՐԸ

- Վանայ ծովին մէջ գտնուած ամենէն գեղեցիկ կղզին էր Լիմ-Անապատը: Հո՞ն ընդարձակ պարտէզներ կային, որոնք ծառերով շրջապատուած էին: Տեղ տեղ ապառաժներ բարձրացած էին:
- Նելսէս Լիմ-Անապատ Պատրիկի խումբը Պանտ-Մահի գետին վրայ բարձրացող լեռներուն մէջ թողնելով, ուղղակի կղզին եկան վանահայրը տեսնելու համար:
- Վանահայր՝ հռչակաւոր Պողոս Եպիսկոպոսն էր:
- Ներքէս Արծրունին փոքրաւորի մը մօտենալով խնդրեց որ Սրբազանին լուր տայ եւ ըսէ թէ այցելու մը եկած է:
- Քաղաքէն եկած էք, հարցուց փոքրաւորը:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Խոստովանողի Գալֆանան Որբա-
նոցի Երանուհի մայրապետը՝ Ժա-
մանակէ մը ի վեր զինք տառա-
պեցնող հիւանդութենէն ընկճուած,
անցեալ երկուշաբթի օր մեռած է,
47 տարեկան հասակին մէջ: Հան-
գուցեալը պղտիկ հասակէն իբր
որբ նոյն հաստատութեան մէջ ըն-
դունուած և Սրբուհի մայրապե-
տին խնամքին տակ զարգանալով
ինքզինք նոյն շաւղին նուիրած էր
և 13 տարիէ ի վեր Որբանոցին
տնօրէնութիւնը կը վարէր խղճմտօ-
րէն: Հանգուցեալը իր կեանքը
500 ոսկւոյ ապահովագրած ըլլա-
լով, այդ գումարը այսօր Որբա-
նոցին կը ժողով:

— Կիլիկիոյ նորընտիր Կաթո-
ղիկոսը կերեալ թէ Ս. Ծննդեան
տօները անցնելէ վերջ պիտի մեկնի
Երուսաղեմէն: Նորին Ամենապա-
տուութիւնը նամակաւ մը Սոյոյ
Կաթողիկոսական Տեղապահ Կի-
րակոս Սրբազանին ազգարարած է
թէ զինք հրաւիրելու համար շըր-
կուելիք պատգամաւորութիւնը ա-
ռանց իրմէ կանխաւ տեղեկութիւն
տանելու Ատանայէ ճամբայ չենէ:

— Չմշկածագի Առաջնորդը
Պատրիարքարան կը տեղեկացնէ
թէ բողոքական բարոզիչ պատուե-
լի Ասատուր իր հակողութեան տակ
գտնուող Որբանոցին հայ որբե-
րուն կարգիլէ Մայրենի Եկեղեցւոյ
հետ հաղորդակցութեան մէջ գրա-
նուիր: Երկուսն որ կերպ մը բըռ-
նութիւն ի գործ կը դնէ զանոնք
բողոքականացնելու համար:

Կրօնքի ազատութիւնը բարոզե-
լու պաշտօն ունեցող այդ պատ-
ուելիները՝ որ բռնութեան կը դի-
մեն, երբ ամէնալ պիտի սկսին
արդեօք:

Պատճառն ի՞նչ էր որ երբ Ա-
ռաքելը նեղր մնալով խոստացաւ
միւս օրը ընկերական տեսան կազ-
մել և խոշոր գէմքերը երեւան հա-
նել, իսկ վարդօն այդ առաւօտ
կանուր Առաքելը Պոլսկալ կը
փախցնէր և կուգար գիս ծաղրե-
լու...:

Յ. Ա. ՃԱՆԿԻԿԵԱՆ
(Յետադարձ կը վերջանայ)

ԻՐԱՆԻՆԻՔԻ ՊԱՏՃԱՐԱՆՆԵՐԸ

Տ. Հ. Ֆիլիսոփ. — Մեր աշխատա-
կից Տ. Էլմասեան հաս ի՞նչ ուսուցչա-
կան պաշտօնը կը շարունակէ: հետե-
ւագէտ առայժմ չէ կարող ուրիշ քա-
ղաքի մէջ պաշտօն ստանձնել:

Տ. Տ. Լիւթիար Երէցեան, Վահան
Կիւլեան, Կարապետ Գործեան, Նիւ-
Պրորօթ, Սմբէրկա. — Ձեր վար-
չութեան տակ գտնուող շախկին Դրա-
գարանի բաժնեգիրը 16 ֆրանք հաճե-
ցէք զրկել: Ձեր ստանձնած պաշտօնը
կը պարտաւորէր զձեզ ժամանակին ի-
մացնել ձեզ Դրագարանի քայքայումը,
որպէս զի թերթին առաքումը դադ-
րեցնելէ: այսօր պատահմամբ կիմա-
նանք ու կը դադրեցնենք, բայց ա-
ռանց հրաժարելու մեր պահանջէն:
Կր սպասենք:

— Տ. Յ. Ֆրանց. Ուսուց. — Քղեցի
կաշիկ եւ Պետրոս Երիկեան եղբայր-
ներու հասցէն է՝

Վասիլ Գալստ-Օղլուի տնտեսանք
(Պուլկարիա) Գալստա
— Նոյնմըր 1է ի վեր խմբագրու-
թեան հասած բաժնեգիրները:

Յ. Սամուէլ. Գալստա	12
Յ. Թորոս. Գահիրէ	14
Պ. Սուք. Ահեղու	6
Կ. Էրզնկ. Գահիրէ	25
Յ. Պատմ. Չրբան	12
Տ. Ուրբ. Անվէր	14
Տ. Գլըճեան. Ամերիկա	15
Թ. Աբրահ. Սուլիա	8
Ս. Մէճէլ. Է. Չակարա	36
Սուրբ Վահագնի Պոլսկալ	6
Յով. Ժամկոչ. Ռումանիս	7
Պ. Գէորգ Գահիրէ	7
Յ. Ղ. Բաղկարա	12
Ս. Մարգար. Գիւղը	6
Ա. Փափագեան. Ռուսէտ	5

սխալած չէի կործանով թէ խնդ-
րոյն մէջ խոշոր և ճարպիկ խաչա-
գողներ կան և խնդիրն ինքնին իր
մէջ գաղտնիք մը կը պարունակէ:
Այդ կորուստ ինքնին ցուալի էր
նաեւ ինձ համար: Այժմ մենք
դառնանք սկիզբէն ահարկ մը
ձգել ժողովուրդի մէջ տիրած աղ-
ջւփ աղմուկին, ահարկ մը որ
պարզ և յստակ կերպով պիտի
լուսարանէ խնդիրը:

Պատճառն ի՞նչ էր որ վարդօն
խոշու մասը կը գտնուէր Պոլսկա-
լէն իրեն գրուած նամակին և հե-
ռագրին, և «Սասուն» արձարանի
մէջ իբր բարեկամ կը տեսնուէր
Առաքելի հետ և բրած տկնարկ-
ներուս անտարբեր կը գտնուէր:

Պատճառն ի՞նչ էր որ պիւսոն
և Ռոստոմ ինձի կը լսեմարարէին
պաղտիւնութեամբ գործել և չու-
նայարել խնդրոյն մէջ, և թէ Առա-
քելը որ վառնալի մէջ օձիքն
ձեռքս տուած էր և ես Ռոստոմը
վառնալ կը կաշէի. իսկ Ռոստոմ
Ֆիլիպէի կողմէր պոլկոր մը կը
հարցաքննէր իբր 28 սնտուկի
գող (.):

Պատճառն ի՞նչ էր որ զիս իբր
անիշխանական մը պոլկոր կառա-
վարութեան կը լսեմարարէին աքսոր
ուելու համար և նախատական բաց
նամակ մը կը ստանայի վառնալէն
հեռանալու համար:

Պատճառն ի՞նչ էր որ կոչակար
կարապետ իր խոստումն կը դրժէր
ինձ տեղեկութիւն տալու և կը
սկսէր պիւսոյի և Ռոստոմի հետ
թղթակցել:

Պատճառն ի՞նչ էր որ վարդօն
և Օ. Գ. չուգեցին Առաքելի 800
ֆրանքի ապրանքները գրաւել:

Պատճառն ի՞նչ էր որ վարդօն
չէր ուզէր իմ ներկայութեան Ա
ռաքելի հետ տեսնուիլ, իսկ գի-
շերները առանձինն կը տեսնուէր:

Իսկոյն նամակ մը գրեցի պիւ-
սոյին, մտնումամտօրէն պարզեցի
իր նախկին ընթացքը դէպի ինձի
և ինչեցի իր ամենապիւր շամակը.
անկէց վերջ մանրամասնօրէն
պարզեցի Պ. Փ. փաղեանի պատ-
մութիւնը և ես ալ ճիշդ պիւսոյին
նման սապէս վերջացուցի նամակս.
«Ինչպէս կրնէիք ձեր նամա-
կու. — ապագան պիտի պարզէ
թէ որո՞նք են անկեղծ և ճշմարիտ
հայրենասէրներ — Ուրեմն ես ալ
ձեզի կրսեմ թէ, ապագան պար-
զեց թէ որո՞նք են ճշմարիտ և ան-
կեղծ հայրենասէրներ»:

Պիւսոյի այս նամակին հետեւա-
մակ մը եւս Ռոստոմին գրեցի այս
խնդրոյ մասին. բայց թէ պիւ-
սոյին և թէ Ռոստոմէն նամակե-
րուս պատասխան չը ստացայ. որ-
դէն ինչ պիտի պատասխանէին. ալ
ո՛ւշ էր...:

Պ. Փափագեան իր պատմութե-
նէն բաւական տառն վերջ խա-
նութս եկու և քով գտնուող ան
հատնորէ ներկայութեան բաւաւ.

«Պ. Ճանկիւլեան, ես քեզի չըսի
թէ ժողովր մեր տունն բրած ենք,
այլ Քաֆէ Տունացոյ. կը խնդրեմ
չփոխած էք այդ կէտը և չիտե-
ցէք»:

— Պ. Փափագեան դուք Քաֆէ
Տունացի անուն չտուէք. բայց խոն-
դիր չէ ժողովին ուր ըլլային կամ
չըլլային. բաւական է որ այդ ժա-
ղովն ըլլալէն վերջ զէքերը ծախ-
ուած են, և դուք աղնուութիւն
ունեցաք այդ զաղտնիքն մեզի
պարզելու»:

Պ. Փափագեան գրեթէ գոհ ըլ-
լալով պատասխանէս՝ մեկնեցաւ.

Որչափ ես ուրախ էի Պ. Փա-
փագեանի պատմութիւնով թէ,

— Այո՛, պատահանց ներսէս Արծրունին:
— Շատ լաւ, սպասեցէ՛ք, բաւ փոքրաւ որն ու
աճապարեց վանդօր աղբարանը մտնելու:

Քիչ յետոյ վերադառնալով՝ իմացուց որ վանա-
հայրը պատրաստ էր զինքն ընդունելու:
Ներսէս Արծրունին հետեւեցաւ փոքրաւորին, որ
վարդապետներու յատուկ խուցերու առջեւ էն անց-
նելով սրբարանին դուռը հասաւ ու ներս մտաւ:

Վանահայրը փափուկ բազմոցի մը վրայ նստած
էր. երբ ներսէս Արծրունին անվիհիւր դիւրով մը
իրեն մօտեցաւ ու աջն առաւ:

— Բարո՛ւյ եկե՛ք, թոթովեց պատկառելի կազ-
մուածով վանահայրը:

— Բարո՛ւ տեսնե՛ք, Սրբազա՛ն հայր, միմիջեց
ներսէս Արծրունին, ուր աթոռի մը վրայ նստե-
ցաւ:

— Վանքը այցելելու փափաքեցա՞ք, հարցուց
վանահայրը՝ սառն ձայնով մը:

— Ի՛նչ վանքը տեսնելու եկայ, եւ թէ՛ կարեւոր
խնդիր մը յայտնելու, չեղանց ներսէս Արծրունին:

— Պատրաստ եմ մտիկ ընելու, ըսաւ վանահայրը՝
մեծ մեծ բանալով իր վառվառն աչքերը:

— Ի հարկէ, Ձեր Սրբազնութիւնը նկատի առած
է ազգային ներկայ կացութիւնն, այնպէս չէ՛:

—
— Հետեւաբար ի՞նչ կը մտածէք այս պարագանե-
րուս մէջ...? Ի՞նչ դարման կարելի է տանիլ
հայրենիքը փրկելու համար:

—
— Միթէ՞ լուծութիւն պիտի պահէք... միթէ՞
քաշուած պիտի մնաք այս հրաշալի կղզիին մէջ:

— Ես... գոչեց վանահայրը:
— Այո՛, Ձեր Սրբազնութիւնը:

— Նախ՛ ես չեմ՝ ճանչնար ձեզ եւ չեմ գիտեր թէ
ո՞վ զրկած է՝ այդ խոսքերն ինձի ըսելու համար:

— Ես ազգային անհատ մըն եմ եւ գիտե՛ք թէ
իմ անհատական պարտականութիւնս է որ թելադ-
րեց զիս այս ճգնաժամը Ձեր Սրբազնութեանը յի-
շեցնելու համար:

— Միթէ՛ ես կոչիլ եմ:
— Կը տեսնէք, այնպէս չէ՛:

— Ամեն ժամանակ:
— Բան մը չէ՞ք մտածեր:

— Ինձի ի՞նչու կրէք... ահա՛ աղղղ, ահա՛ աղ-
ղիկ մեծ-աղանդը: Գնա՛ անոնց պատմէ: Ես չեմ
խառնուիր, որովհետեւ «մի խառնուիր» ըսին
ինձի:

— Ի՞նչ կրէք, Սրբազա՛ն հայր, միթէ՞ չէք
գիտեր որ աղային հոգը չէ թշուառ զիղացիներու
տառապանքին, անոնց անհետանալը, մահաւանդ
ներկայ գրութեան վատթարանալը...: Ձե՛ք որ Ձեր
Սրբազնութեան աչքին առջեւ տեղի կուենայ...
պիտի չբողոքէ՞ք:

— Որո՞ւ պիտի բողոքեմ:
— Ձեռնհաս իշխանութեան:
— Ձեռնհաս իշխանութեան:

— Այո՛:
— Ես ի՞նչ գործ ունիմ՝ ձեռնհաս իշխանութեան
դիմելու կամ բողոքելու: Դուք խաղաղներ ունիք,
խելացի մարդիկ ունիք, մահաւանդ սուրբ հայրա-
պետացու մը ունիք... չեթա՞ք անոնց քով...
չըսէ՞ք անոնց՝ թէ ժողովուրդը ձեռքէ կերթայ,

թէ հայը կը փճանայ ներկայ աղետալի դրութեան
մէջ եւ թէ բողոքելու անհրաժեշտութեան ժամա-
նակն է...: Ի՞նչ կուղէք ինէ. չէ՞ որ դուք բերիք
զիս այստեղ, չէ՞ որ աշխարհք արարաւ իմ անունս
քառակուսեցիք, չէ՞ որ Ստամպուլ քաղաքը խաղը
ու խայտառակ դարձուածքներ ըրիք ինձի դէմ...:
Դուք ըսէ՛ք... դուք խօսեցէ՛ք... ա՛յ ի՞նչ սրտով
նայիմ ժողովուրդին վրայ... ա՛յ ի՞նչ հոգեով աշ-
խատիմ անոր համար: Գրիտոսո՛ւ որ Աստուած էր,
չզիմացաւ, երբ ապտակ մը զարկին իր երեսին
անիրաւ տեղ: Իսկ իմ հրեւիս չէ՛ թէ ապտակ մը
զարկիք, չէ՛ թէ միայն թուք ու մուր նետեցիք,
այլ օտարներու առջին անա՛նկ հայնոյնութիւններ
տուէր որ մարդիկ չուենորուն անգամ չեն ըներ:

Ներսէս Արծրունին, որ մտիկ կընէր Պոլոս եւ
պիսկոպոսի դառն գանդատները, խոռվուած չար-
ժում մը բրաւ ու գոչեց.

— Միթէ՞ քանի մը աղանդներ հասուցած չարիքը,
սա խեղճ գեղացիները պիտի քաշեն: Կը հաւատա՞ք
որ ժողովուրդին մէջ Ձեր Սրբազնութիւնը յարգող-
ներ չկան:

— Գիտե՛մ... իմ գեղացիներս չեն մոռցեր իրենց
ըրած բարութիւնս, կակտեց վանահայրը՝ կէս
բերնով մը:

(Շարունակելի)

— Թիֆլիսի բաղադրական (պէլէտի) ժողովոյ նորոնոր անդամներուն 51ը հայ, 15ը վրացի, 6ը ռուս, 3ը մալական, 2ը գերման, 2ը լեհ և 1ը պարսիկ է։

— Թէքուճէ (Ռուսաստան) մեզ կը տեղեկացնեն հրատարակուած ծխափու գիւղացի (Մշոյ գաւառ) Միս Գրիգորեան ազգայինը 7 ամիս առաջ, Պատրիարքարանի միջոցաւ, 2 օսմանեան ուկի զրկած է իր աղքատ ընտանիքին, բայց դրամը տեղը չէ հասած. և անկէ ի վեր այդ դրամի մասին գրուած բազմաթիւ նամակներ Պատրիարքարանը անպատասխան թողած է։

— Հանգանակութեան ցանկը յաջորդով։

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԵԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Վիեննայի Գեղարվեստի 12 թարիսի ակթիւնի թէլէկրաֆ վերիմիջ տիր։

«Կազմակարգը պէյանը իւզրէ, իւնաթ նէշը իթարմէքսիդին՝ Մաքէթնիւրը, էրմէնի վէ Աւպանիա գոմիթէրի պուրատա պիր գոնկրէ թէճէմմիւ իթմիշէր։ Իշպու գոնկրէ՝ Պալգան նիմէզիւրէ էհալիսինն արզուլարընա վէ անլէրէ գարըը իճրա օլընան զուլուվարա էվրոբա տէօվէթլէրին տըգգաթընը ճէլպ իթմէք իշին գարար վերմիշ։ Վէ քէլա Պէրլին անտնամէսինն իմզա իթմիշ օլան տէօվէթլէրէ խիթապ միւթ. թէֆիգէն պիր տալէթնամէ կէօնտէրէք, իսլահաթ իճրապընը թալէպ իտիմէսինն թահթը գարարա ալմըշ»։

— Աւստրիանըն մէպուսան մէճլիսինտէ՝ խըրվաթ մէպուս վուգօփի, հիւթիւմէթի իսթիճվապ իտէրէք, «Պէրլին անտնամէսինն իմզա իթմիշ օլան տիկէր տէօվէթլէր իլէ պէրապէր՝ Աւստրիանըն տախի՝ Պալգանտա ասայիշի իպզա իթմէք իշին վատ օլընան իսլահաթ իճրա օլընամաընը Պապը Ալիտէն իտտաա իթմիշ մի տիր» տէյու սիւալ իթտի։

— Մաքէթնիւր իսթիւլընտան գաշմըշ օլան ֆագիրլէրէ իտանէթէն Ռուսիատա «Սլա խայիրխահան» շիրքէթինտէն կէօնտէրիմիշ օլան ագճէի ֆուգարայա տաղըտմագ իշին Սօֆիատաքի ռուս Կոնստանտին զէվէսի սինօրա կիթմիշ տիր։

ՏԱԽԻԼԻԹԷ

Սոն սաաթտա Ռուսուգտան գապուլ իթտիկիմիզ պիր մէթիւպտէ մէսէրլէթլէ օգուտուգ քի՝ Ռուսուգըն շըմէնտըֆէր նաշարնիկի Մ. Յ. Սվաճեան Ռուսահա գըրալը ճանիպինտէն՝ մահէլին Ռուսէն Կոնստանտին եէտի իլէ՝ Գոն։

րոն տը Ռուսահա կիւմիւշ խաշընա նայիլ օլմուշ տըր։ Մուսաթիւն Մ. Յ. Սվաճեան թա Պուկարիանըն սէրպէստիլէթինտէն էվվէլ, Ռուսէլի շըմէնտըֆէրլէրինտէ ալնը մէմուրիլէթլէրտէ պուլընուպ, մէհարէթ ու զարէթի իլէ հէր քէսին հիւսնի թէվէտնուհընա նայիլ օլմուգլէ պէրապէր, պուկար գարըըզըրլէրաըն էսնասընտա չօգ ճանլար գալթարմըշ վէ չօգ խայրէթլէրտէ պուլըմըշ տըր։ Պու տէֆա Գրալ Գարօլըն Ռուսուգա թէշիրֆիլէրի մինասիպէթի իլէ, Ռուսուգ սթասիօնընա գալթարլար եէքտիկէմինն թաա գիպ հալինտէ՝ մուսալիլ Մ. Սվաճեանըն իպրազ իթմիշ օլտըրը տըգգաթ ու մէհարէթ Գոալ հուգըլէրինն թագտիրինն մուգհար օլմուգլէ՝ իշթէ մէշքիւր խաշ նիշանը իլէ անը թալթիֆ իթմիշ տիր։

Պու միւնասիպէթլէ պիզ տախի Մ. Սվաճեանը թէպիրլէ, անըն միւսէլլէմ օլան տիրալէթի միւսիպ, տահա եիւքսէք մէմուրիլէթլէրէ վէ նիշանլարա նայիլ օլմա սընը թէմէննի հտէրիզ։

— Ռուսուգ սթասիօնընա գարըը թուլնատա 5 վարօր վէ 15 չըլէր պուզլարտան իհաթէ օլընարագ գալմըշլար, պուլար մալլէրլէ տօլու օլուպ, պիր թարաֆտան զախիթէ սթասիօնա չըգարըըրօր քի շըմէնտըֆէրլէ վառնայա նազ օլընսըն։

ԱԼՄԱՆԻԱ

Եննի կէօմրիւք նիգամնամէսի Ռայիսթակտա ուզուէ միւստէլէրտէն սօնրա 136 սէսէ գարըը 184 սէսլէ գապուլ օլընմըշ տըր։ Պու նիգամնամէ իլէ խարիճտէն Ալմանիայա իտիսալ օլընամագ մալլէրին վէ զախիթէնն կէօմրիւքլէրի ֆէվգէլատէ արթըյօր։ պու սէպէպլէ Աւստրիա, իթալիա վէ Ռուսիա տէօվէթլէրի տախի Ալմանիա մալարընա գարըը կէօմրիւքլէրի արթըմայա մէճպուր օլաճագլար վէ պուլնտան տօլայը պէ յինլէրինտէ կէրկինիք հուսուլա կէլէճէք զանն օլընըյօր։

ԵՆՆԻ ՄՈՒՀԱՐԷՊԷ

Ամերիկատա վէնէցուէլա ճիւմ հուրիլէթի իլէ Ալմանիա վէ ինկիլթէրա տէօվէթլէրի պէյինտէ չու կիւնլէրտէ միւնասէպաթը ռօլիթիդիլէ պօզուլմըշ վէ չու իքի տէօվէթլէրին էլիլէրի վէնէցուէլատան չէքիմիշ տիրէր։ Ալման վէ ինկիլթ զըրհըլարը տախի վէնէցուէլանըն հարպ սէֆինէլէրինն իսթիլա իթմէքտէն մատա, սահիլլէրի իհաթա իթմիշլէր վէ պազը նօգթալարա ասքէր տախի չըգարուպ, կէօմրիւքլէրի զապթլարը ալթընա ալմըշլար տըր։

Վէնէցուէլա էյալէթի Գրանսա նըն իքի միպի կէնիշ իտէն, եալընը իքի պուլուգ միլիոն էհա

լիսի վար տըր։ Ճիւմհուրիլէթիլիսի Մ. Գաաթիւր Սլման վէ ինկիլթ էլիլէրինտէն 48 սաաթ միւտտէթի օլալ իշլիլմարօլ ալտըգտան սօնրա՝ անլէրին թալէպինէ իգթիֆ օվէրմէքտէն մատա, էհալինն ինկիլթ վէ ալման գօնսօլուհանէլէրինն գարըը հիւսնամինն մէնն իթմէյուպ, մէքիւր իքի տէօվէթլէրին թապալարըն տէրտէսթլէ թէվգըֆ իթտիրմիշ իտի։ Մ. Գաաթիւրն պու հարէքէթի վարօրարըն ալման վէ ինկիլթ զըրհըլարտան թուլթուլա սընտան սօնրա զուհուրա կէլտի իտէտէ, Մ. Ամերիկա էլիլիսի մէքիւր իքի տէօվէթլէրին թապալարալընը քէնտի հիմայէսի ալթընա ալմըշ օլտըղընտան, թէվգըֆ օլընան էլիսաը սէրպէսթ պըրազ տըրտը։ Մ. Գաաթիւր պիր իւնա նամէ նէշիլ իլէ բօլիթիգա միւթթէհիլէրինն աֆվ էյլէյուպ, ումուս վէնէցուէլա էհալիսինն սիլահա տալէթ իթտի, վէ թէլալլէ մուհարէպէ հազըրըզլարը կէօրիլիլիլ իտէտէ էլան թօր թիւֆէնկ սէտալարը իշլիլթլէմիշ տիր։

Մ. Ամերիկա պու միւնագալալ նէթիճէ վէրմէք իշին միւտալիլէ իթմէկէ ռէյիս Մ. Գաաթիւրտան մէգուհիլէթ իսթմիշ տիր։ Հէր հալտէ Մ. Ամերիկա չալըշամագ վէնէցուէլա արապիսինտէն ինկիլթ վէ ալման տէօվէթլէրինն եէր վէրտիլմէկէ, զիլա Մ. օնրօյէինն թապտիս իթմիշ օլտըղը մէպտէ իւզրէ, էվրոբա տէօվէթլէրին Ամերիկատա հէնի արազիէ էլ վուրմալարընա՝ Մ. Ամերիկա հիւթիւմէթի ճիւմհուրիլէսի էլ հէր ճիւթ գարըը կէլմէկէ վազիֆէտար տըր։

ՐՈՒՄԱՆԻԱ

Ռուս-թիւրք մուհարէպէսինն 25 ինճի սէնէի տէվրիլէսի օլմագ վէ Ռուսահանըն գրալիլէթ իլան իթմիշ օլմաը միւնասիպէթի իլէ պիւթիւն Ռուսահատա զիլնէթլէր իճրա օլընտըգտան մատա, օլ մուվաֆադիլէրին վէ Բէլլիս ֆիլթուհաթընըն զիլլիլ իշին Պուգրէշտէ ճէսիմ պիր սանէմ եաբըլաճագ. պուլնա 500 000 ֆրանք թախսիս օլընմըշ տըր։

Ռուս ջարը տախի մէքիւր ֆիւթուհաթըն զիլլիլ միւնասիպէթլէ օլ մուհարէպէլէ իշլիլարա իթմիշ օլան զապիթլէրի թէպրիլէ թէշէքիւրինն պէյան իթմիշ տիր։

ՖՐԱՆՍԱ

Մարսիլիտա իսկէլտէ վէ վաբօրլարտա չալըշան իշիլէր սօն կիւնլէրտէ թալթիլ մէշղուլիլէթ իթմիշ օլուպ, սօգազարտա նիւմալիլթտա պուլթըյօրլար վէ չալըշան իշիլէրի թալթիլ իճպար իտէյօրլար գարըըզըրը մէնն իթմէք իշին միւտալիլէ իտէն Ժան։

տարմալարա գարըը իշիլէր սիլահ իսթիլալէ ճէտարէթ իթտիլլէրինտէն, Ժանտարմալար ալթէլ իթմէկէ մէճպուր օլուպ, 25-30 քիշի էօլիւ վէ հարէլի տիւշմիւշ տիր, իթմէքիլէր տախի թալթիլ իթմիշ լէր։

ՄԻԻԹԷՆԷՎԼԻԹԷ

Ատէնտէն պիր թէլէկրաֆ եալան ռէսուլ (մարգարէ) Մահտի Մուլլանըն գաթիլ օլընտըղըն պիլտիրիմիշ տիր։

— Ալմանիանըն կէզօ մատէննտէ 5-6000 քիլօկրամ տինամիթ բալթալմըշ օլուպ 6 քիշի էօլմիւշ վէ չալար եարէլէնմիշ տիր։

ՍՐԱՀ "ՍՈՆԴՐԱԼ"

Վաղը գիշեր նասեճսա խմբին կողմանէ պիսի ներկայացուի ի նպատակին Պաշտա Շաքարեանի, սոսիին անգամ ըլլալով «Հաւատք, Յոյս, Սէր» թատերգութիւնը 6 արար։

"ՎԱՋԻՆ, ԵՐԳԱՐԱՆ

600 երեսէ բաղկացած, 300էն աւելի երգեր, նշանաւոր գործիչներու կենսագրութիւններ ու լուսանկարներ կը պարունակէ իր մէջ։

Գոյացած հասոյթը յատկացուած է զուտ բարեսիրական գործի մը։

Ամէն դասակարգին զիրամատչելի ըլլալու համար որոշուած է ծախուիլ 5 ֆրանքի Դիմիւ առ 4—16

Թ. Կ. Ճանկիլիւսան Վառնա (Պուլկարիա)

ԱՐՄԵՆԻԱ ԼԻՆԶԻ. — Հ. Ֆ. Բ. Լիւնչի, պատկերովը եւ ինքնակենսագրութեամբ։ Գրեց Պ. Տօնապետեան, գինն ճանապարհածախսով 3 ֆրանք. գինիլ աշխատասիրողին՝ 117 Կօսթլէն Րօս - Լոնսոն W 4—8

ԿԸ ՓԵՏՈՒԻ

Բնիկ Երզնկացի, Մեղուա գեղացի ֆիրազ Մարգրիսեանի երկու որդոց՝ Արշակ եւ Սիմօն Մարգրիսեանի ուր ըլլալը գիտցողներէն կը խնդրուի որ խմբադաւթեան տեղեկացնեն։

ՆՈՐ ԳԻՆԵՏՈՒՆ

Վարդան չալուշ Պետրոսեան եւ Պողոս Չալուշեան բացած են քաղաքիս նախկին զօրանոցին զիմացը գինետուն մը, եւ յարգոյ հասարակութեան կը յայտարարեն թէ այս նոր հաստատութեան մէջ կը գտնուին զուտ խաղողի օղի, ըստի գինի եւ ուրիշ ամէն տեսակ ըմպելիներ, մաքուր թեան հոգ կը տարուի։ Տան համար գինոգներուն գոհացուցիչ զեղչ։ 1—3

ՁՐԻ ԾՍԵՆՈՒՅՈՒՄ ՉԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻՐ

Պաշտօնական ազդերու տղը (25 տառ) 10 սանդղիւ։ Անհատական ազդերու տղը (25 տառ) 20 սանդղիւ։ Երեսնականէն աւելիի համար 20 0/0 զեղչ։ Փոխարեանը դրամ կամ նամակադրոշմ որկն կանխիկ։

Одъяснитель Н. Драгулов
Меч. на Хр. Н. Войниковъ—Варна